

Ֆինանսական օգնության ծրագրերի ամփոփում

Dignity Health-ի Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ նկարագրված են ֆինանսական օգնության ծրագրերը, որոնք հասանելի են չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդների համար, որոնք բավարարում են որոշակի պահանջներն ըստ եկամտի՝ Dignity Health-ի կողմից ստացած անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար վճարելու համար: Չապահովագրված հիվանդը դա այն անձն է, որը չունի բժշկական ապահովագրություն՝ չի օգտվում մասնավոր ապահովագրությունից կամ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրից, և որն իրավունք չունի փոխհատուցում ստանալու հիվանդանոցային հաշվի համար: Ոչ բավարար ապահովագրություն ունեցող հիվանդը, դա այն անձն է, որն ունի բժշկական ապահովագրություն, սակայն ունի բարձր հիվանդանոցային հաշիվներ, որոնք մասամբ փոխհատուցվում են ապահովագրական ընկերության կողմից:

Անվճար խնամք՝

• Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է մինչև 200%, դուք կարող եք անհատույց հիվանդանոցային ծառայությունները ստանալու իրավունք ունենալ:

Ձեռքված խնամք

- Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան տարեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է 200-350%, ապա դուք կարող եք իրավունք ունենալ ձեռք հիվանդանոցային ծառայությունների հաշիվները նվազեցնել մինչև այն առավել մեծ հիմնավորված գումարը, որը կարող է վճարվել պետության կողմից, որը սովորաբար վճարվում է Medicare-ի կողմից նմանատիպ ծառայությունների համար:
- Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան տարեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է 350-500%, ապա դուք կարող եք իրավունք ունենալ ձեռք հիվանդանոցային ծառայությունների հաշիվները նվազեցնել մինչև կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed)՝ Դաշնային օրենքով սահմանված գումար, որն արտացոլում է այն գումարը, որը փոխանցվում է հիվանդանոց մասնավոր ապահովագրական ընկերություններից և Medicare-ից (ներառյալ համավճարները և չփոխհատուցվող նվազեցման գումարները) անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար:

Եթե դուք մեր Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնություն ստանալու իրավունք ունեք, ապա դուք պարտավորված չեք լինելու վճարել ավելին, քան ստորև նկարագրված կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed): Որակավորվելու դեպքում դուք կարող եք նաև առանց տոկոսագումարի ընդլայնված վճարման պլանի համար դիմել:

Դուք երբևիցե պարտավորված չեք լինելու կանխավճար կատարել կամ այլ վճարային մեխանիզմներից օգտվել՝ շտապ օգնություն ստանալու համար: Հիվանդանոցի Ֆինանսական օգնության քաղաքականության և ֆինանսական օգնության հայտատուների անվճար պատճենները հասանելի են

հիվանդանոցի ստորև նշված վեբ կայքում կամ մուտքի մոտ գտնվող ընդունման կետերում: (Հետևեք “Admitting”՝ ընդունման կետ, կամ “Registration”՝ գրանցման կետ, նշաններին): Այդ փաստաթղթերի պատճեններն ըստ պահանջի կարող են նաև փոստով ուղարկվել ձեզ, եթե զանգահարեք ձեր հիվանդանոցի Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին ստորև նշված հեռախոսահամարով:

Traducción disponible: Այդ փաստաթղթերը կարող եք նաև ձեռք բերել իսպանական և այլ լեզուներով ձեր հիվանդանոցի վեբ կայքում, հիվանդանոցի ընդունման կետում կամ զանգահարելով հիվանդանոցի հեռախոսահամարով:

Dignity Health-ի Ֆինանսական խորհրդատուները կարող են պատասխանել ձեր հարցերին, տրամադրել տեղեկատվություն մեր ֆինանսական օգնության քաղաքականության մասին և օգնել ձեզ ֆինանսական օգնության համար դիմելու գործընթացին: Մեր աշխատակազմը գտնվում է հիվանդանոցի ընդունման կետում, որտեղ կարող եք զանգահարել նաև ստորև նշված հեռախոսահամարով:

Bakersfield Memorial Hospital 420 34th St., Bakersfield, CA 93301 | **Ֆինանսական խորհրդատվության բաժին** 661-327-4647 ext 4692
Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին 866-397-9272 | www.dignityhealth.org/bakersfieldmemorial/paymenthelp

Mark Twain 768 Mountain Ranch Rd, San Andreas, CA 95249 | **Ֆինանսական խորհրդատվության բաժին** 209-754-2622
Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին 866-397-9272 | www.dignityhealth.org/marktwainmedical/paymenthelp

Mercy Hospital Downtown 2215 Truxtun Ave, Bakersfield, CA 93301 | **Ֆինանսական խորհրդատվության բաժին** 661-327-1792 ext 4692
Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին 866-397-9252 | www.dignityhealth.org/mercy-bakersfield/paymenthelp

Mercy Hospital Southwest 420 34th St, Bakersfield, CA 93301 | **Ֆինանսական խորհրդատվության բաժին** 661-327-4647 ext 4692
Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին 866-397-9252 | www.dignityhealth.org/bakersfieldmemorial/paymenthelp

Mercy Medical Center 333 Mercy Ave, Merced, CA 95340 | **Ֆինանսական խորհրդատվության բաժին** 209-564-5105
Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին 866-626-6583 | www.dignityhealth.org/mercymedical-merced/paymenthelp

St. Joseph's Behavioral Health Center 2510 North California St, Stockton, CA 95204 |
Ֆինանսական խորհրդատվության բաժին 209-461-2000 **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 866-397-9252
www.dignityhealth.org/stjosephsbehavioral/paymenthelp

St. Joseph's Medical Center 1800 North California St, Stockton, CA 95204 | **Ֆինանսական խորհրդատվության բաժին** 209-461-5281
Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին 866-397-9272 | www.dignityhealth.org/stjosephs-stockton/paymenthelp